



*Համարը N 1221-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2007.10.31/53(577) Հոդ.1131
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ փոխվարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.11.2007*

*Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 18.10.2007
Ստորագրման ամսաթիվը 24.10.2007
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը*

Գապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ԶԿԻՐԱՌԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հոկտեմբերի 2007 թվականի N 1221-Ն

ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ԶԿԻՐԱՌԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 128-132-րդ հոդվածների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում զինծառայողների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ**

Հ. Արբահամյան

2007 թ. հոկտեմբերի 24
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2007 թվականի
հոկտեմբերի 18-ի N 1221-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ԶԿԻՐԱՌԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում զինծառայողների (այսուհետ՝ զինծառայողներ) նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հետ կապված Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ու այլ զորքերի զորամասերի և զինվորական կառավարման հիմնարկների հրամանատարների (պետերի) իրավունքներն ու պարտականությունները զինծառայողների հաշվառման ու նրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը:

II. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՍԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

- 2. Զինծառայողների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններն են՝
 - 1) զորամասերը.
 - 2) ռազմաուսումնական հաստատությունները.
 - 3) զինված ուժերի և այլ զորքերի զինվորական կառավարման մարմինների վարչությունները, առանձին բաժինները և ծառայությունները.
 - 4) Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատը (այսուհետ՝ զորամաս):
Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանությունը
- զինծառայողների նկատմամբ վերահսկողություն է իրականացնում օրենքով սահմանված կարգով և դեպքերում:
- 3. Զինծառայողների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտականությունը դրվում է սույն կարգի 2-րդ կետով սահմանված մարմինների հրամանատարների (պետերի, Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարի (այսուհետ՝ հրամանատար) վրա:
 - 4. Հրամանատարը պարտավոր է՝
 - 1) իրականացնել զինծառայողների անհատական հաշվառում.
 - 2) իրականացնել վերահսկողություն զինծառայողների վարքի, նրանց կողմից հասարակական կարգի, զինվորական կանոնադրքերով սահմանված ծառայողական հարաբերությունների կանոնների պահպանման և դատարանի կողմից նրանց վրա դրված պարտականությունները կատարելու նկատմամբ.
 - 3) համագործակցել իրավասու պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ՝ զինծառայողների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործընթացն առավել արդյունավետ և նպատակային կազմակերպելու համար:
 - 5. Հրամանատարն իրավունք ունի անձամբ ստանձնելու կամ իր գրավոր հրամանով տեղակալներից մեկի վրա դնելու համապատասխան պարտականություններ՝ սույն կարգի պահանջներն անշեղ և հստակ իրականացնելու համար:

III. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

- 6. Զինծառայողների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է նրա ծառայության վայրի զորամասի հրամանատարը՝ անձամբ կամ սույն կարգի 5-րդ կետով նախատեսված կարգով:
- 7. Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին դատարանի դատավճիռը կամ որոշումը և դրա օրինական ուժի մեջ մտնելը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային ստորաբաժանումների կողմից գորակոչիկի վերաբերյալ զինկոմիսարիատ ուղարկված՝ վերահսկողություն իրականացնելու համար սահմանված փաստաթղթերն ստանալուց հետո 3-օրյա ժամկետում հրամանատարը զինծառայողի վերաբերյալ կազմում է անձնական գործ (ձև N 1):
Անձնական գործում ներառվում են տեղեկություններ զինծառայողի անձի, բնակության վայրի, նախկին ծառայության վայրերի, ինչպես նաև պատժի կատարման համար նշանակություն ունեցող այլ հարցերի մասին:
- 8. Հրամանատարը զինծառայողի անունով լրացնում է հաշվառման քարտ (ձև N 2), զինծառայողին պարզաբանում է նրա իրավունքները և պարտականությունները, դրանք խախտելու համար սահմանված պատասխանատվությունը, ինչի մասին նրանից վերցվում է ստորագրություն (ձև N 4): Հաշվառման քարտի օրինակը հրամանատարը 3-օրյա ժամկետում ուղարկում է ռազմական ոստիկանության կայազորային բաժին:
- 9. Հրամանատարը պարտադիր զինվորական ծառայության գորակոչված զինծառայողին հաշվառման վերցնելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների իրականացման բաժնի՝ զինծառայողի բնակության վայրի բաժանմունքին հայտնել դրա մասին, իսկ զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում՝ զինծառայությունից նրա արձակվելու և փորձաշրջանի ընթացքում նրա վարքագծի մասին: Զինծառայողի՝ ծառայության վայրը փոխվելու դեպքում ծառայության նոր վայրի զորամասի հրամանատարը զինծառայողին հաշվառման վերցնելուց հետո դրա մասին տեղյակ է պահում ծառայության նախկին վայրի հրամանատարին: Զինծառայողի ծառայության նախկին վայրի հրամանատարը նրա ծառայության նոր վայր է ուղարկում զինծառայողի վարքագծի վերաբերյալ տեղեկություններ:

10. Զինվորական ծառայության ընթացքում դատապարտված և պատիժը պայմանականորեն չլիքառելու դեպքում զինծառայողին հաշվառելու մասին հրամանատարը 10 օրվա ընթացքում հայտնում է դատավճիռ (որոշում) կայացրած դատարանին:

11. Հրամանատարը զինծառայողին հաշվառման վերցնելուց հետո 3-օրյա ժամկետում հաղորդում է համապատասխան զինվորական կառավարման մարմնի իրավասու ծառայությանը (ձև N 5):

12. Փորձաշրջանի ժամկետը հաշվվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով սահմանված կարգով: Զինծառայողի վարքագծի, ինչպես նաև դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման կամ սահմանափակումների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով հրամանատարը պարտավոր է առնվազն ամիսը մեկ անգամ ստուգել զինծառայողի վարքը և նրա կողմից ծառայողական պարտականությունները կատարելու կարգը:

13. Եթե զինծառայողը խուսափում է դատարանի դատավճռով կամ զինվորական ծառայություն անցնելու կարգ սահմանող օրենքներով իր վրա դրված պարտականությունները կատարելուց, կամ կատարել է այնպիսի արարք, որի համար նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, ապա հրամանատարը պարզում է դրանց պատճառները, անհրաժեշտության դեպքում նշանակում ծառայողական քննություն, որի արդյունքների մասին ստորագրությամբ ծանոթացվում է զինծառայողին:

Հարգելի պատճառների բացակայության դեպքում զինծառայողը գրավոր նախազգուշացվում է պատիժը պայմանականորեն չլիքառելը վերացնելու հարցով դատարան դիմելու հնարավորության մասին (ձև N 6), ինչի մասին կազմվում է արձանագրություն և ստորագրությամբ ծանոթացվում զինծառայողին:

14. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտումները կատարելու դեպքում, ինչպես նաև երկու և ավելի անգամ սույն կարգի 13-րդ կետով սահմանված ստորագրություն վերցնելուց հետո խախտում թույլ տալու դեպքում հրամանատարն իրավասու է պատիժը պայմանականորեն չլիքառելը վերացնելու և դատարանի դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին միջնորդություն ներկայացնել դատարան: Միջնորդություն ներկայացնելիս, միջնորդության մեջ նշվում են զինծառայողի կողմից համապատասխան խախտումը կատարելու մասին վկայող փաստեր, այդ թվում՝ նրան տրված գրավոր նախազգուշացման մասին:

Միջնորդությանը կարող են կցվել նաև բնութագրեր ծառայության վայրից:

Պատիժը պայմանականորեն չլիքառելու դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող զինծառայողի նկատմամբ վերահսկողության իրականացման ավարտից հետո հրամանատարը զինծառայողին տալիս է պատժից ազատվելու մասին տեղեկանք (ձև N 3) և դրա մասին հայտնում զինվորական կառավարման համապատասխան մարմնի իրավասու ծառայությանը:

15. Սույն կարգի 4-րդ գլխով նախատեսված հիմքերով զինծառայողին հաշվառումից հանելուց հետո զինծառայողի անձնական գործը սահմանված կարգով արխիվացվում է:

IV. ՊԱՏԻԺ ԿՐԵԼՈՒ ԴԱԴԱՐՈՒՄԸ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

16. Զինծառայողը հաշվառումից հանվում է հետևյալ հիմքերով՝

- 1) պատիժը պայմանականորեն չլիքառելու դեպքում փորձաշրջանի ժամկետը լրանալիս.
- 2) պատիժը պայմանականորեն չլիքառելը կամ պատիժը կրելու հետաձգումը դատարանի որոշմամբ վերացնելիս.
- 3) համաներման կամ ներման դեպքում.
- 4) օրենքով նախատեսված հիմքերով դատապարտյալին պատժից ազատելիս.
- 5) ծառայության վայրը փոխվելու կամ զինվորական ծառայությունից արձակվելիս:

Զինծառայողները հաշվառումից կարող են հանվել օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Զինվորական ծառայությունից արձակվելիս պատժի ժամկետը չլրանալու դեպքում զինծառայողների անձնական գործերը և հաշվառման քարտերն ուղարկվում են նրանց բնակության վայրերի այլընտրանքային պատիժների իրականացման բաժանմունքներ: Զինծառայողի բնակության վայրի բաժանմունքի ծառայողն անձնական գործն ու հաշվառման քարտն ստանալու մասին 7-օրյա ժամկետում տեղեկացնում է հրամանատարին:

17. Զինծառայողի մահվան դեպքում նա հաշվառումից հանվում է սույն կարգով սահմանված կարգով:

18. Պատիժը պայմանականորեն չլիքառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կատարելու, ինչպես նաև նոր հանցագործություն կատարելու համար դատապարտվելու դեպքում զինծառայողներին հաշվառումից հանելը կատարվում է գորամատում դատարանի դատավճիռը կամ որոշումն ստացվելու օրը:

19. Զինծառայողին հաշվառումից հանելու հիմքերի և ժամանակի մասին անձնական գործում և հաշվառման քարտերում կատարվում են համապատասխան գրառումներ:

20. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված զինծառայողների վարքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է սույն կարգով սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Ձե N 1

Զորամաս N

ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾ N _____

(ազգանունը, անունը, հայրանունը)

Ծննդյան տարեթիվը և վայրը _____

ՀՀ քրեական օրենսգրքի _____ հոդվածով _____ 200 թ.

դատապարտվել է _____

(պատիժն ու ժամկետը)

Հաշվառման է վերցվել _____ 200 թ.

Հաշվառումից հանվել է _____ 200 թ.

Հանձնված է արխիվ _____ 200 թ.

Արխիվային N _____

Պահպանման ժամկետը _____

ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ց Ա Ն Կ

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ N _____ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

NN ը/կ	Փաստաթղթի անվանումը ամիսը, ամսաթիվը, տարեթիվը	Թերթերի համարները	Ծանոթագրություն
1.			
2.			

Հ Ս Կ Ո Ղ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

**ՋԻՆԾԱՌԱՍՅՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ԿԱՍ ՀՄԿՈՂԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ
ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ստուգման ժամանակը	Ստուգողի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը	Ստուգման արդյունքները, (թերությունները և առաջարկությունները)	Ստուգողի ստորագրությունը

ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Անձնական գործի երկրորդ մասում գրանցվում են առկա փաստաթղթերի ցանկում նշված (ժամանակային հաջորդականությամբ կարվում են) հետևյալ փաստաթղթերը՝ զինծառայողի բնութագիրը, սպայական ժողովների նիստերի արձանագրությունները կամ դրանց քաղվածքները կամ այլ ակտեր՝ պայմանական վաղաժամկետ ազատելու մասին,

կողմնորոշիչ տեղեկանքներ՝ զինծառայողի նկատմամբ հատուկ հսկողություն սահմանելու անհրաժեշտության դեպքում (թմրադեղեր օգտագործելու և այլն),

խրախուսանքների և տույժերի մասին փաստաթղթեր,

վերադաս մարմիններին ուղարկվող դիմում-բողոքների ուղեկցող գրությունների պատճենները և ստացված պատասխանները,

զինծառայողին բնութագրող, ինչպես նաև այլ փաստաթղթեր:

Մ Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պատժից ազատվելու մասին տեղեկանքն ստացա:

Ստացողի ստորագրությունը և ազգանունը _____
_____ 200 թ.

Գործը բաղկացած է _____ թերթից:

Անձնական գործը կազմված է՝

N _____ գորամասի _____ -ի կողմից:
(պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը, հայրանունը)

_____ 200 թ.
(ստորագրությունը)

Անձնական գործը վարեց

_____ -ը:
(պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը, հայրանունը)
_____ 200 թ.
(ստորագրությունը)

Անձնական գործն ավարտեց

_____ -ը:
(պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը, հայրանունը)
_____ 200 թ.
(ստորագրությունը)

Համաձայն էմ՝

գորամասի նրամասառը _____
(կոչումը, ստորագրությունը, ազգանունը)
_____ 200 թ.

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏ

Ազգանունը _____

Անունը _____ Անձնական գործի համարը _____

Հայրանունը _____

Ծննդյան տարեթիվն ու վայրը _____

Հասցեն և հեռախոսահամարը _____

Աշխատանքի վայրն ու պաշտոնը _____
(նշում պայմանական վաղաժամկետի վերաբերյալ)

Քաղաքացիությունը _____

Դատապարտվել է _____ 200 թ.

(դատարանի անվանումը, հողվածը, պատժատեսակը և չափը)

Լրացուցիչ պատժատեսակը _____

Նշումներ պատժի ժամկետի փոփոխման մասին _____

Պատժի ժամկետի սկիզբը _____

Պատժի ժամկետի ավարտը _____

Հաշվառման է վերցվել _____ 200 թ.

Նախկին դատվածություններ _____

Տեղեկություններ ընթացքի մասին _____

Հաշվառումից հանվել է _____ 200 թ.

Քարտը լրացրեց _____
(պաշտոնը)

(կոչումը)

(ստորագրությունը)

(ազգանունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Ն _____

Տրվում է _____
(ա ն ու ն ը, ա զ գ ա ն ու ն ը, հ ա յ ր ա ն ու ն ը)

Ծ ն ն յ յ ա ն տ ա ր ե թ ի վ ը _____
(օ թ ը, ա մ ի ս ը, տ ա ր ե թ ի վ ը)

Ծ ն վ ա ծ _____
(ք ա դ ա ք ը, մ ա ր զ ը, գ յ ու ը)

Ա զ գ ու թ յ ու ն ը _____

Ը ն տ ա ն ե կ ա ն դ ր ու թ յ ու ն ը _____

Զ ի ն ա պ ա ր տ ու թ յ ու ն ը _____

Դ ա տ ա պ ա ր տ վ ա ծ _____

Ն ա խ ս կ ի ն դ ա տ վ ա ծ ու թ յ ու ն ն եր _____

Ա յ ն մ ա ս ի ն, որ պ ա տ ի ժ է կ ր ե լ N _____ գ ո ր ա մ ա ս ու մ

_____ 200 թ. մ ի ն չ ն _____ 200 թ., որ տ ե ղ ի ց

ա զ ա տ վ ե լ է _____ հ ի մ ա ն վ ի ր ա:

Հ ր ա մ ա ն ա տ ա ր _____

Տ ե ղ ե կ ա ն ք ն ս տ ա ց ա _____

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մ Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Վ Ե Ր Ց Ն Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ես՝ _____ ,
(դատապարտյալ զինծառայողի պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը, հայրանունը)

ՀՀ քրեական օրենսգրքի _____ հոդվածի համաձայն _____
_____ 200 թ. _____
(դատարանի անվանումը)

կողմից (որոշմամբ փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված)

դատապարտված _____ -ի,
(նշել պատիժը)

ստորագրությամբ հավաստում եմ այն մասին, որ ինձ պարզաբանվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվությունը՝ դրանք չկատարելու համար:
_____ 200 թ. _____
(դատապարտվածի ստորագրությունը)

Ստորագրությունը վերցրեց

գորամասի հրամանատար _____
(պաշտոնը, կոչումը)

_____ (ստորագրությունը)

_____ (ազգանունը)

_____ 200 թ.

Լիազոր մարմնի _____ վարչության պետ
(կոչումը, անունը, ազգանունը, հայրանունը)

N _____ գորամասի կողմից հայտնվում է, որ _____
(դատապարտյալի անունը, ազգանունը)

դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի _____ հոդվածով (հոդվածներով) _____ 200 թ.
_____ կողմից
(դատարանի անվանումը)

_____ (պատժի տեսակը և չափը, փորձաշրջանի կամ պատժաժամկետի հետաձգման

_____ ժամկետը, դատապարտվածի մասին լրացուցիչ տեղեկություններ)

_____ :

N գորամասի հրամանատար

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը, կոչումը)

_____ 200 թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՅՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N _____ գորամաս _____ 200 թ.

Ես՝ N _____ գորամասի հրամանատար _____

(կոչումը, ազգանունը)

կազմեցի սույն արձանագրությունն այն մասին, որ դատապարտյալ _____

(պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը)

թույլ է տվել _____

(նշել խախտման բնույթը)

_____ :

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի _____ հոդվածի _____ մասով՝ դատապարտյալ _____ -ը նախազգուշացվում է, որ իր վրա դրված պարտականություններից հետագայում ևս խուսափելու կամ նոր իրավախախտում թույլ տալու դեպքում հնարավոր է դատարանի դատավճռով նրա նկատմամբ նշանակված պատիժն ի կատար ածվի (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերացվի պատժի հետաձգումը կամ պատիժը պայմանականորեն չկիրառելը):

Զորամասի հրամանատար _____

(կոչումը, ստորագրությունը)

Ծանոթացա _____

(դատապարտյալի ստորագրությունը և ազգանունը)

_____ 200 թ.